

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի տարածքում կամ թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայքը՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի հեռախոսազանգերի կենտրոն՝ 010 59 33 33 , 060 27 33 33 համարով:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԱՌԱՐԿԱՅԱԶՈՒՐԿ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՇԻՎ

Գործողություն	Սակագին
Հաճախորդների խումբ	Ֆիզիկական անձ և իրավաբանական անձ/ԱԶ հաճախորդներ
Հաշվի բացում	Անվճար
Հաշվի վերաբացում	Անվճար
Հաշվի տարեկան սպասարկման վճար	1000 ՀՀ դրամ
Հաշվով գործարքների նվազագույն չափ	Չի սահմանվում
Հաշվով գործարքների առավելագույն չափ	Պայմանավորված է գործարքի պահանջներով
Կանխիկ գումարի մուտքագրում հաշվին	Համաձայն բանկային հաշվի սակագների և պայմանների
Հաշվով հնարավոր գործառնությունների տեսակներ	Հաշվի համալրում Բանկից անկանխիկ ոսկի գները և այն մետաղական հաշվին մուտքագրելու միջոցով
	Հաճախորդի կամ այլ անձի Բանկում կամ այլ բանկում առկա մետաղական հաշվից ոսկու անկանխիկ փոխանցման միջոցով
	Հաշվի ելքագրում Մետաղական հաշվում առկա անկանխիկ ոսկին Բանկին վաճառելու միջոցով
	Հաճախորդի կամ այլ անձի Բանկում կամ այլ բանկում առկա մետաղական հաշվին ոսկու անկանխիկ փոխանցում կատարելու միջոցով:
Տարեկան անվանական տոկոսադրույք	0% (տարեկան տոկոսային եկամտաբերությունը հավասար է 0%)
Հաշվից ներբանկային փոխանցումներ	Անվճար
Հաշվից միջբանկային փոխանցումներ	0.3% min 28,000 ՀՀ դրամ (յուրաքանչյուր մուտքի և ելքի համար)
	Հաշվից միջբանկային փոխանցումներ իրականացնելուց առաջ հարկավոր է նախապես համաձայնացնել Բանկի հետ՝ ներկայացնելով ստացող կողմի ռեկվիզիտները: Բանկը իրավասու է

	մերժել փոխանցման հայտը, եթե թղթակից բանկի միջոցով հնարավոր չէ կատարել տվյալ փոխանցումը:
Հաշվի փակում	Անվճար

1. Առարկայագրով մետաղական հաշիվները նախատեսված են անկանխիկ ոսկու հաշվառման համար և չեն ենթադրում ոսկու կանխիկ մուտքագրում և ելքագրում:
2. Ոսկու հաշվառման համար հիմք են հանդիսանում միայն ոսկու հարգը և կշիռը: Առարկայագրով մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկին չափվում է գրամներով: Մետաղական հաշիվները ոսկու համար կարող են բացվել միայն 999.9 հարգի ոսկով:
3. Մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկու հաշվառումն իրականացվում է գրամներով՝ 0.01 գրամ ճշտությամբ, մեկ տրոյական ունցիան հավասար է 31.10348 գրամի:
4. Ոսկու անկանխիկ առքուվաճառքը կատարվում է հաճախորդի գործարքի էական պայմաններ (գինը, կատարման ժամկետը և կշիռը) պարունակող հայտի հիման վրա:
5. Բանկի կողմից սահմանվում են 1 գրամ անկանխիկ ոսկու առքուվաճառքի փոխարժեքներ, որոնք հիմք են ընդունվում հաշվով իրականացվող գործարքներ իրականացնելիս:
6. Հաշվի փակման դեպքում տարեկան սպասարկման գումարի գանձումը կատարվում է հաշվի բացման օրվանից սկսված՝ տարին մեկ անգամ՝ տարեկան միջին մնացորդից, ընդ որում, եթե հաշիվը փակվում է տարվա ընթացքում, գանձումն իրականացվում է փակման պահին՝ տվյալ ժամանակահատվածի միջին մնացորդից:
7. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:
8. Առարկայագրով մետաղական հաշիվների բացման, վարման և դրամարկղային սպասարկման վերաբերյալ կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են համապատասխան պայմանագրով:
9. **Ուշադրություն՝ Հաճախորդի հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանա հաճախորդը՝ իր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում: Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգը կարող եք գտնել հետևյալ հղմամբ՝ [Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկ:](#)**
10. Առարկայագրով մետաղական հաշվի գումարի վրա տոկոսները հաշվարկվելու են հաշվին գումարը մուտք լինելու օրվանից մինչև այն հաճախորդին վերադարձնելու կամ հաճախորդի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:
11. Հաճախորդի հաշվից միջոցների դուրսգրումը կատարվում է ոչ ուշ, քան Հաճախորդի կողմից համապատասխան վճարման հանձնարարականը Բանկ ներկայացնելու հաջորդ բանկային օրը:
12. Հաճախորդի հաշվին ուղղված միջոցները մուտքագրվում են Հաճախորդի հաշվին, ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելուց մեկ օրվա ընթացքում:
13. Առարկայագրով մետաղական հաշվի քաղվածքները տրամադրվում են հաճախորդին առնվազն երեսնօրյա պարբերականությամբ հաճախորդի նախընտրած տարբերակով.
 - էլ. Փոստի միջոցով
 - առձեռն
 - փոստով:
14. Բանկը պարտավոր չէ Հաշվետիրոջը հաշվի քաղվածք տրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել:
15. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

16. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:
17. Հաշվով կատարված գործառնությունների դիմաց քաղվածքների և վճարային փաստաթղթերի կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման սակագները սահմանվում են համաձայն Բանկի գործող [«Բանկային հաշիվների, փոխանցումների և «Այրի Բանկ» ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների սակագներ»](#)-ի:
18. **Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:**
19. Հաշվի քաղվածքը ստանալուց 15-օրյա ժամկետում հաշվի հետ կապված գործառնություններում անճշտություններ հայտնաբերելու դեպքում հաճախորդը Բանկին կարող է ներկայացնել բողոքարկում: Նշված ժամանակահատվածում բողոքարկումները չստանալու դեպքում Բանկը քաղվածքը համարում է ընդունված: Բողոքարկումը ներկայացվում է Բանկին գրավոր դիմումի տեսքով: Սահմանված ժամկետում ստացված բողոքարկման դիմումը Բանկն ընդունում է կատարման՝ իրականացնելով տեղական և միջազգային վճարային համակարգի կանոններով սահմանված համապատասխան գործողությունները:
20. Բանկի մասնաճյուղերի և բանկոմատների ցանկին, վերջիններիս գործունեության հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ [Մասնաճյուղեր և Բանկոմատներ](#):
21. Ֆիզիկական անձանց հետ Բանկի կողմից հեռահար սպասարկումն իրականացվում է IDBanking առցանց համակարգի միջոցով: Բանկի հեռահար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են [«Հեռահար բանկային ծառայությունների մատուցման իրապարակային պայմաններում»](#):
22. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել Առարկայագուրկ մետաղական հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող պարզ տոկոսադրույքի չափը՝ այն ուժի մեջ մտնելուց 15 օր առաջ հրապարակելով Բանկի պաշտոնական կայքում:
23. Բանկի և հաճախորդի միջև ծագած վեճերը կարգավորվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով: Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ էլ. փոստ՝ info@fsm.am Հեռախոս՝ (+37460) 70-11-11 Ֆաքս՝ (+37410) 58-24-21 և/ կամ առևտրային արբիտրաժում («Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով):
24. Բանկային հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարման ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:
25. Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարման ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:
26. **Առարկայագուրկ մետաղական հաշիվները չեն հատուցվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:**
27. Սույն տեղեկատվական ամփոփագրով չկարգավորվող դրույթները կարգավորվում են [«Բանկային հաշիվների, փոխանցումների և «Այրի Բանկ» ՓԲԸ կողմից մատուցվող այլ ծառայությունների սակագներ»](#)ով:
28. Առարկայագուրկ մետաղական հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներկայացված է [Հաշիվների բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր ցանկում](#):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԿՈՂՄԻՑ